

ՀԱՍՏԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (Grèce)

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ
այլ գրութիւնք ետ չեն զրկուիր: Յոգ-
ուածներու պատշաճ դատուածները միայն
կը հրատարակուին:

Բաժնեգէնի կամ ծանուցման փոխարէն ա-
մէն երկրի նամակագրօջմներ (փուլ) կ'ըն-
դունուին հարիւրին 20 պակաս հաշուելով:

Մանուցումներ կ'ընդունուին դիւրա-
մատելի գիններով:

ΕΦΗΜΕΡΙΣ Η ΕΝΩΣΙΣ

ՄԻՌԻԹԻՒՆ

(ՕՌԿԱՆ ՄԻՌԻԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ)

ԲԱԺՆԵԳԻՆ

Տարեկան արծաթ ֆրանք 4
Վեցամսեան , , 2
Հայաշատ քաղաքներու մէջ ձեռքէ կը
ծախուի հատը 10 սանթիմ:
Փոսթի ծախքը խմբագրութեան կը
պատկանի:
Բաժնեգէնները կանխիկ վճարելի են:
Թերթ ուզողներու բաժնեգէնը չը
պարունակող նամակները նկատի չեն
առնուիր:
«Միութիւն»ը և ոչ մի անգ ձրի չը
զրկուիր:

Գին 10 ՍԱՆԹԻՄ

ԿԻՍԱՄՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գին 10 ՍԱՆԹԻՄ

Գ. ՏԱՐԻ

ԱԹԵՆԲ

15127

ԱՊՐԻԼ

1899

Թիի 30

ԿԱՐԾԻՔ ԿԱՍ ՃԸԾ- ՄԱՐՏՈՒԹԻՒՆ

«Ով որ այս խաբկատիւ կենաց
աղմկայոյց շուկային մէջ գործէ,
պարտի ճանչնալ թէ՛ վաճառքը, և
թէ՛ ծախողը. այդ ալ ո՛չ թէ խաբե-
լու, այլ քիչ մը քիչ խաբուելու հա-
մար: Սա ըստ հեղինակին ճշմար-
տութիւն է, որ ըստ այլոց կրնայ
կարծիք մը լինել. բայց բուն վճիռը
տալ կը թողունք մենք յարգելի բն-
թեցողին:

Մենք, Հայքս այսօր կը գտնու-
ինք բոլոր անցած, գնացած ժամա-
նակներէ աւելի խաբկատիւ ու կեղ-
ծաւոր մի ժամանակի մէջ, յորում,
այս անհնաւոր մեր ընդլայնակալ
հակառակորդներու մէջ գէշքը, ո՛չ
խելքը, ո՛չ կեղծաւորութիւնը, ո՛չ
գրամը և ո՛չ ալ ազգեցութիւնը ի
հանդէս եկած ենք շատ անհաւասար,
շատ անհաւանական պայքար մը մը-
ղելու, մի միակ շատ հինցած, ո՛չ
թէ զէնք, այլ միջոցի նման մի բան
մեզ հետ ունենալով, որու սովորա-
բար իր աւուրք կամ արդա-
րութիւն վերացական անունը
կուտան մարդիկ, և ամենատկարէն
մինչ ամենազօրաւորը չին գործածելի
խկապէս ո՛չ իրաւունք և ո՛չ արդա-
րութիւն, բայց միայն կ'արտասանեն
այդ բառերը, երբ պահանջն նոցա
չանը: Այդպէս եղած էր առաջ, այդ-
պէս է հիմա ու այդպէս պիտի լինի
մինչև աշխարհի վերջը. սա ըստ իս
ճշմարտութիւնն է, իսկ ըստ այլոց
կրնայ կարծիք լինել:

Մենք, Հայքս ունինք այժմ ա-
ռաւել թուով խմբագրներ, հանդէս-
ներ, լրագրեր որչափ չունենինք մեր
հանդարտ և ո՛չ հալածեալ ժամանա-
կին մէջ. իբր այն, թէ՛ արդէն ամէն
բաներնս գործերնս լմնցեր, կար-
գադրուել է, և կարգն եկած է գը-
րական մի ոսկեղաւի գարկ տալու
նպատակաւ բազմապատկել այդ տե-
սակ հրատարակութեանց թիւը, որ
Հիթթայի գլխու նման կը բուսնի ու
կը բուսնի աշխարհի որ ծակէն ու
ծայրէն ուզես. Գաղղիա, Անգլիա,
Ամերիկա Պուրկարիա... ծնունդ
կուտան նոցա, որք ուրիշ բան չեն,
բայց եթէ գաղափարներու կուտա-
ծաղիկ. սա ալ կրնայ թէ՛ ճշմարտու-
թիւն թէ՛ կարծիք լինել. բայց գուցէ
մի քիչ բնորոշուի սոյն խնդիրը սա
կերպով:

Ժամանակաւ ազգային փրկու-
թեան կ'ոչը կը հրատարակուէր 'ի
Լոնտոն. Ազգը փառք ու պատիւ և
ուսկի, և արծաթ և հոգի չի խնայեց
այդ կ'ոչի ամէն մէկ պատգամին, ու
իւր էութեան մեծագոյն մասովն ալ
այդ ինքնակոչ կ'ոչին գոհ եղաւ:

Ձուհի արեան գոլորշին կամ կ'ոչի
փառքն ու շահը ցնցեցին ուրիշ կողա-
կանի մը զգացումներն ու ուզեցը, և
ահա յանկարծ մի նոր կոչնակ գուրս
եկաւ նոյն ոտանէն. ցցուեցաւ,
աշտանակացաւ, դատեց, գատափե-
տեց, ստեց, ճշմարտեց և վերջապէս
յաջողեցաւ առժամանակեայ իւր գը-
լուխն ուտել, և ապա հակառակորդ-
դին մարմինը, փառքը պատիւը, սա-
կայն առանց նորա կորուսածը գտնե-
լու դարմանելու կամ գէթ իւրացը-
նելու:

Բայց պահ մը այնպէս կ'ընկաւ թէ
մարդը յաղթական եղաւ նորակոչ
կոչականին, որը սակայն մեքաւ և
բոլորով մի նոր միանալ սկսաւ: Տեհա-
նա շատուածոյ հեռաւոր հովանոյն
հսկողութեամբ որու ձեռքէն բռնած
առաջնորդներն ու կառաւորներն
ծաղրածունք կամ բաւականներ,
քննադատելի քննադատներ, ազգին
համար եղունգ չի կտորոզ ազգա-
սէրն եր. ու ինչ կրնեն. — մին
կը գատապարտէ կղերական մը, մե-
ռած ըլլալուն համար. միւսն չի հաւ-
նիր հրապարակագրի մը հասակը կարծ
ըլլալուն համար, ուրիշ մը կ'այսպէս
ազգասէր երեստաարդ մը, պարզա-
պէս անոր չափ չի յարգուելուն հա-
մար և այն հին աստուծոյ մը տա-
ճարին մէջ. Յանկարծ կ'ողբացուի
հարուստ մը, միայն շուտ մեռնելուն
համար, կ'աղոթուի մի ուրիշ կլի-
մայի մէջ ազգասէրը հին գործիչ լի-
նելուն համար. որք պէտք է կոխո-
տուի նոր սերնդէն. (կան ուրեմն ու-
մանք, որ չեն հիշար): Վնասակար
ազգակործան, վնասակ, Մերուծան և
այլն կը հռչակուին անկիւն մը, այն
մարդիկ որք մեքենացած չեն պուռ-
տախօսի մը կարծեաց բլանին կամ
գլանին:

Ու այս ամենը կը գրուին, կը
հրատարակուին, գիւղեր, քաղաքներ
և մայրաքաղաքներ կը տարածուին
ազգին գրամով, (ներուի մեզ ազ-
գին գրամով ըսելնիս, գիտնա-
լով հանդերձ թէ այդ գրամներն վե-
րագրեալների հեղինակներու կը պատ-
կանին, բայց մենք այդ հեղինակներն
ալ ազգ կը կոչենք) ու այս ամենը,
որ կը գրուին ու կը մրուին, երբէք,
ո՛չ երբէք օգուտ կը բերեն ազգին.
սա ճշմարտախառն կարծիք մ'է,
գուցէ և անխառն. հակառակ ապա-
ցուցումը շատ սիրելի է մեզ տեսնել,

բայց ո՛ր. գուցէ միայն թղթի վրայ.
բայց ինչ որ տեսանք թղթի վրայ,
ա՛լ բաւական է... բաւական է ինչ
որ գրուեցաւ թէ՛ պիտի ընենք,
ու չեղաւ. բաւական է ինչ որ գըր-
ուեցաւ թէ ըրինք ու եղած
չէր, բաւական է ինչ որ լուե-
ցաւ թէ՛ կայ, ու չկար ամենին.
բաւական են վերջապէս կոչականնե-
րուն, պայմանականներուն, ծաղրա-
բաններուն, աստուածականներուն,
պատմականներուն, հայցականնե-
րուն, ներգործականներուն այսչափ
երկար օրօրող ու ո՛չ միայն ան-
գուտ, այլ և վնասակար գեգերմունք.
սա միայն կարծիք չէ. պարզ յայտնի
և շատ որոշ ճշմարտութիւն է, որ
պէտք է թողուլ ի բաց ստոր ինքնա-
սիրութիւնը, լրջութեամբ ճանաչել
այն հրապարակը, ուր ո՛չ քրիստոնէ-
ութիւն կայ, ո՛չ մարդասիրութիւն և
ո՛չ արդարութիւն կամ Աստուած.
այլ միայն շահ ու ծայն կայ,
ու ժիւծայն կայ և զէնքի ու
ի որքամանկութեան ծայն
կայ, այդպիսի մի սոսկալի ասպա-
րիզի մէջ գործելու կոչումն ունենալ
և յաջողութիւն յուսալ, շատ և շատ
գոհուար է... նորէն հիասթա-
փումն...:

Շահէն

ԵՐԻՐՈՊԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ
ՀԱՅԵՐԹԻ ՄԱՍԻՆ

Մեր կանոնաւոր թղթակցութիւն-
ները սկսելէ առաջ հարկաւոր կը
դատենք, առանց շողորորթութեան և
անաշառութեան, որոշ կերպով ըսել:
Հայոց գիրքընթերցողի հասարակական
կարծեաց առջև այն է թէ Հայ ազգին
բարեկամները, անոնք որ ճշմարտա-
պէս անոր բարիքը կուզեն, պէտք է
անկեղծօրէն խօսին և բնաւ մթու-
թեան մէջ չի թողուն գաղափարները:
Շատ մարդիկ իրենք զիրենք հայերուն
բարեկամ ըլլն, որոնք ուրիշ նպա-
տակ չունենին եթէ ոչ հայերը իրենց
շահուն գործածել: Չարժէ այս մա-
սին այսինչի կամ այնինչի վրայ յար-
ձակել: Հայերը թող յիշեն թէ՛ քանի՛
քանի՛ անգամներ իրենց օգնութեան
խոստումներ եղան և քանի՛ անգամ-
ներ ալ երեսէ ձգուեցան առանց ա-
մենափոքր օգնութիւն մը ստա-
նալու:

Հայերուն ըսած էին՝ «Եւրոպայի
հասարակական կարծիքը ձեզ նպաս-
տաւոր է բոլորովին, և նա կարող
պիտի լինի կառավարութիւնները ըս-
տիպել որ ձեր մասին միջամտեն»:
Առաջ, հայերը գիտեն թէ՛ ինչ հե-
տեւանք ունեցաւ այդ կարծեցեալ
«հասարակական կարծիքը...» ասկէ
աւելի չենք խօսիր այս մասին:

Ինչ պէտք է ըսել ուրեմն:

Նախ պէտք է Հայաստանը ճանչ-
ցընել: Եւրոպական հասարակութեան
ջախջախիչ մեծամասնութիւնը, նոյն
իսկ կարելի է ըսել ամբողջութիւնը.
կատարեալպէս անտեղեակ է Հայաս-
տանի և Հայերու մասին, նա անոնց
նկատմամբ թերթեր կարդացիր և եր-
բեմն ճառեր լսեր է միայն հալա-
ծանքներու ժամանակ և ուրիշ ոչինչ:
Մինչ յոյները իրենց հին պատմու-
թեամբ, սերպերը և պուլկարները
առւսաց հետ ունեցած ցեղական ա-
ռնչութեամբ լուրջ համակրութեան
արժանացած էին Եւրոպայի առջև:
Նոյնը չի պատահեցաւ հայերու հա-
մար: Այս վերջիններու մէջէն, ա-
նոնք որ իրենք զիրենք մի քիչ եռան-
դով ցոյց տուին և գործեցին, Եւրո-
պայի մէջ չիթթուեցան անիշխանա-
կաններու հետ: Գիտենք արդէն թէ
Եւրոպայի մէջ անիշխանականները
հասարակաց կարծիքը վայելելէ շատ
հեռի են:

Պէտք է դարձեալ, ամէն տեսակ
չափազանցութիւններէ խոյս տալ,
եթէ ու է աւագակութեան մը հա-
մար — որպիսիները կը պատահին
նոյն իսկ քաղաքակիրթ և ամենախա-
խաղ երկիրներու մէջ — որք և ա-
ղաղակ բարձրացնեն, եթէ անոնց մէջ
անտանելի հալածանքներու նշաններ
տեսնեն, ո՛չ միայն իրենց ժամանակը
կորսնցնելու վտանգին մէջ կ'լինան,
այլ նոյն իսկ իրենց գատին կը վնա-
սեն, անոր ծառայել կարծելով:

Երբ մէկը միշտ «գա՛լ, գա՛լ»
պօռայ, ու երբ իրաւցնէ գայլը գայ,
մարդ օգնութեան չի վազեր, աղա-
ղակն հաւատ չընծայելով:

Բոլոր այս դիտողութիւնները
մեզ ներշնչուած են, մեր գէպի հայ
ազգը ունեցած վառ համակրանքն:

Ինչ է, և ինչ պիտի լինի հայ
ազգին դերը:

Մահմետական ժողովուրդներէ
չըջապատուած լինելով, նա կրնայ և
պէտք է որ լինի քրիստոնէական և
արեւմտեան քաղաքակրթութեան ա-
ռաջին և գլխաւոր դերակատարը:

Նա պէտք եղած կատարելու-
թիւնները և միջոցները ունի այս ազ-
նիւ գործին մէջ յաջողելու. ասոր
համար է որ մենք մեզ թոյլ կու-
տանք բարեկամաբար հայերուն խոր-
հուրդ տալու է որ համբերեն և կա-
տարեալ վստահութիւն ունենան ճըշ-
մարիտ բարեկամներու վրայ որոնք
առանց ցուցասիրութեան, այլ իրա-
պէս իրենց պիտի օգնեն. հայերը թող
չի վտանգեն իրենց մօտակայ և մեծ
ապագան, անժամանակ և անտեղի
ձեռնարկներով:

Saissy և Մելիք Ս. Դաւիթ-բէկ
Բարիկ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԵԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՌՈՒՍՃՈՒԹԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻՆ
ԹԻԻ 4

ՀԱՅՈՒ ԺԱՀՐԸ ԾԾՈՂ
ԽԱՉԱԿՈՂ ՍՐԻԿԱՆԵՐԸ

«Չգուշութիւն» վերնագրով շրջաբերականի մը մէջ, Վարչութիւնս մերկացուցած էր այն փողոցային թափափուքները, որ «Հայրենասէր» անուան ներքեւ փախուրտած՝ Հասարակութեան բարի տրամադրութիւնները չհազարձելու պատիւը տուած էին իրենց: Անոնք ո՛չ միայն մեզի ծանօթ այն ողորմելի, ինկած, ցրտորամիտ արարածներն էին, այն դատարկագորտ, անօթի սողունները, այն վազրելի պնակալէզները, որ ուրիշներու ազդեցութեամբ կը լզուրուտեն, այլ նաեւ Լօնտոն և այլուր բնակող յայտնի դաւաճան-մատնիչներու ըստօրաբար գործիքներ:

Անոնցմէ որ մէկը՝ ըզըզային հիւանդութեամբ բռնուած, գաղափարի փողոցային շարժման, գրգռանալու խմբագիր և ստորաբարձ արարածներն են, որոնց չորտաճ ուղեղը կը վազէ իրենց խնդիրներն հետ, ուրիշներ՝ անպատկառ ու լիբր խաչագողներ, այլք՝ կեղծարարներ կնիքի, և ոմանք ալ, թուրք կառավարութեան արտասահմանի պաշտօնէութեան վստահութիւնը յայտնապէս վայելողներն են, ևն, բայց ամենքն ալ, ի բնուտ, նորին Կայսերական Վեհափառութեան ստեղծ հոգեւոր համբարձող ճոր-

տին՝ Արփիար Արփիարեանի կեղտոտ վարձկանները: Եթէ այդ «Հայրենասէր» երիտասարդները՝ ամենէն ևս ուրիշ, գաղտնի ձեռքով և ճարպիկ գործըր չեն, և ո՛չ մէկ կուսակցութեան պատրուակին ներքեւ գործող՝ Հարկ չէ՛ր որ իրենց ինքնակոչ և պատրուակեալ «Հայրենասէր» անունները ըստօրաբար էին:

Չէ՛ մի որ Հասարակութիւնը իրաւունք ունի անարժան դատելու առաջարկութիւնն այն անձերուն, որոնք իրենց անցեալ գործունէութեամբ ձգտած են այդ միեւնոյն Հասարակութիւնը սպաննել: Հայաստանցին, ինչպէս և Չէյթունցին, ամբողջ պատմութեան ընթացքին մէջ, ամենայն համբերութեամբ կըրցած է տանիլ ամէն տեսակ սով, տանջանք, բայց սակայն բարձր է մնացած միշտ, իր վիզը չէ ծռած այն դաւաճաններուն, որ իրեն վըշուր մը հաց են երկնցուցեր:

Հայ ազգը Մերութեանները և Վասակները կըրցած է ջաւշտիւն, անոնց առաջարկած փրկութիւնը (°) բնգունելէ աւելի: Կը կրկնենք ու պիտի կրկնենք, և առ մեր է՛ն սրբազան պարտականութիւնն է, թէ՛ «Հայրենասէր» անուններն տակ պահուրտած անձիւր, այն քստմեկի արարածները, այն անամօթ, անպատկառ սրկաններն են, որոնց բաւական չըլլալով ամէն թուրք ու մուր, Հարկ է գլուխին ճգնել, իբրեւ ապականարար, փտտած որդեր, իբրեւ դաւաճանութեան նողկալի գործակիցներ, իբրեւ պոռնկավարու ու քստմեկի ստորակներ, և թոյլ չի տալ, որ Հասարակական գործունէութեան մաքուր ասպարէզը ապականեն իրենց ժաշ-

րալից ներկայութեամբ: Երբ հասարակութիւնը համոզուի որ այդ ազգային մակարոյճ սովալլուկները Լօնտոնեան յայտնի դաւաճանի յայտնի գործիք, և հետեւապէս, լրտեսի օգնական լըրտեսներ են, ո՛վ պիտի ըլլայ իր արժանապատուութիւնը ճանչցող այն հայը, որ թոյլ պէտք է տայ իրեն թելադրուիլ ո՛ր և է պատճառով՝ հայրենիքը ի վաճառ հանող այդ սիլընբորներու գործակիցներէ:

(Կնիք)
ՀԱՅԿԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՌՈՒՍՃՈՒԹԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻՆ
20 Մարտ 1899 ՌՈՒՍՃՈՒԹ
ՊՈՒԼԿԱՐԻԱՆԸ ՆԱՍԱԿՆԵՐ

Շատ ուրախ եմ որ... «Միութիւն» մէջ խղճի Հանգարտութեամբ պիտի կրնամ պարզել Սօփիաբնակ Հայերու բարեփոխումը, յորմէ իցիւթէ շատեր օրինակ առնելով ջանային անոնց հաւասարել:

Այ մենք ալ կրնանք դասուիլ այն Հայրենասէրներու կարգին, որոնք գիտեն իրենց պարտականութիւնները կատարել ազգասիրութեամբ: Քանի մը չաբաթի եր առաջ գրեթէ ամենքս ալ իրարու դէմ դիմուած մեր Ազգ. վեհ գործերն անհատական խնդիրներու առջեւ կը դռնէինք: Ան առաջ Ստամբուլի և տեղացիի անհատ կուրներով զբաղուած եկեղեցիին ու վարժարանին վճարմունքները գաղբեցուցինք: Սահակ-Մեսրոպ ընկերութեան ընթերցարանի մէջ գիշերային դասեր աւանդելու նպատակը փճացուցինք: Վերջապէս ամէն բարեկամական աշխատ-

տութեան կուտարար տրանջացող ձայներ արգելք կը հանդիսանային ու այլևայլ գանդատներ բառնալով տեղւոյս ազգային գործերը չ'ընթերցեան դատապարտած էին: Վերջեւ մանաւանդ խորտուծները իրարու գլուխ պատուելու տատիճանին հառուցած էին, այնպէս որ մի քանիսն ուրացութիւնը հայ ապրելէն նախաձեռնար կը համարէին:

Իսկ այժմ բերկրութեամբ կը խոստովանիմ թէ անձնական և կուսակցական անխորհուրդ կռիւներն ու ատելութիւնները բոլորովին դադարած՝ ամենքս ալ իբր և կըրպարներ խաղաղութեամբ կապրինք, համոզուելով որ մեր Ազգային գործերու աննախանձելի վիճակը միայն համարաւ գործակցութեամբ պիտի կըրնանք բարեկարգել:

Տեղւոյս ազգային իրենց նիւթական նպատներով եկեղեցին մեծցնելու ջանքեր կրնեն, որքան կը խնամեն և սովեակներու նպատակը զրկեն, ամենաազգայն Հայը յոժարութեամբ կը նուիրէ իր լուսման: Անշուշտ իր տիկիներն ու օրիորդները իրենց պատրաստած ձեռնորոշներով ու նիւթական օժանդակութեամբ եկեղեցին ու վարժարանը կը զարդարեն: Սահակ-Մեսրոպ ընկերութեան տեղ Գարոյ անուն ընկերութիւն մը կազմուեցաւ, որուն պատանդամներու անկեղծ ջանքերը մեծ յոյսեր կը խոստանան մեզ:

Յիշատակութեան արժանի են նաեւ այն մեծամեծ զոհողութիւնները զորս չեն ինչոյժ թաղական խորհրդոյ պատանդամներն, Տէր Արիստակէս Ֆէաղեան և այլ բարեհաճ անձինք, որոնց շնորհի Սօփիացի Հայերը

ԼՐՏԵՍ - ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ
ԻՆԸ ՏԵՍԱՐԱՆՈՎ
Դիտեց և Գրեց
ՃԵՄՐԱՐԱՆՈՍՈՒՄԱՆ
(Շաբ. 29րդ թուէն)
ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

(Տեսարանը կը ներկայացնէ Բերայի Քաֆէ Սրբանոցի տը ճորտները վառուած են, սեղանի մը առջեւ դէմ առ դէմ նստած են Արփիար և Օհանջանեան):

Արփիար — Փաշային միտքը չի կրցի հասկնալ թէ ինչո՞ւ համար անպատճառ գէնք տալ կը հրամայէ:

Օհանջանեան — Իսկապէս, զբոսուած է իմանալ, ինչ որ էլ լինի, երևում է որ մեզ աննպատակ է լինելու զէնքի գոյութիւնը:

Արփիար — Ես ո՛չ օգուտը կը տեսնեմ կոր և ո՛չ ալ վնասը:

Օհանջանեան — Շատ պարզ է որ նրանք մի բան սարքած կը լինին, անշուշտ մեր օգտի համար չեն աշխատում:

Արփիար — Սակայն ինչ վնաս ունի զէնքը, գուցէ պէտք ունենան զէնքի գիմելու և պաշտպանելու:

Օհանջանեան — Ի Հարկ է զէնքի պէտք կըգայ, բայց այն ժամանակ մենք հեռանում ենք մեր խաղաղասիրական ծրագրից:

Արփիար — Խաղաղասիրական ինչ է. ես մինչև վերջը համամիտ չի պիտի ըլլամ, չէնքով շնորհքով յեղափոխական շարժում մը պէտք է: Մի քանի երիտասարդներով Սատրաղամին

աղերսագիր մը ներկայացնելը նշանակութիւն չի պիտի ունենայ: Մանաւանդ Դաշնակցականները մեր վերայ պիտի ծիծաղին, պիտի ըսեն թէ Հնչակեանները ոյժ չունին:

Օհանջանեան — Իսկապէս Նազարէկի կարծիքն էլ այդ է, սակայն շատեր ասում են թէ քաղաքական հագաճանքները շատ աննպատակ են այժմ:

Արփիար — Սխալ է այդ. Սասունի ջարդէն յետոյ Անգլիոյ բռնած ընթացքը ցոյցին նպաստաւոր է, մանաւանդ ուրիշ ատեն ժողովուրդին այդ տրամադրութիւնը չենք ունենար, Հայ ժողովուրդը անհղտ անհամբերութեամբ համակուած է, ամէն կողմէ ձայն կը բարձրանայ թէ յեղափոխականները պէտք է շարժին խնդրոյն կրկնութիւն տալու և Մայիսի բարենորոգմանց ծրագրերը գործադրել ստիպելու համար:

Օհանջանեան — Ժողովուրդին ոգեւորութիւնը յայտնի է, բաւ է յիշել Համբարձման տօնի և Ազգ. Սահմանադրութեան տարեդարձի ժամանակ ժողովուրդին բորբոքած արամադրութիւնները: Ես էլ ուզում էի զէնքով շարժում, սակայն Տամատեան ինձ համոզեց թէ մեծ արիւն կարող է վաթիլ: Բայց իսկապէս այժմ տեսնում եմ որ առիթը ձեռքից չի պէտք է բաց թողնել, ժողովուրդի տրամադրութիւնից պիտի օգտուի:

Արփիար — Եւ արդէն ինչպէս կարող էինք մերժել փաշային պահանջը, գոնէ ես չի կարող համարձակիլ:

Օհանջանեան — Ե՛ս էլ:

Արփիար — Ուրեմն, եթէ մեր ընկերները մեզ չի համաձայնին, մենք պարտաւորուած առանց անոնց գիտութեան պէտք է մի քանի զէնքեր բաժանել տանք, որպէս զի փաշային պատուէրը կատարած ըլլանք:

Օհանջանեան — Ձեր կարծիքը յարգում եմ:

Արփիար — Դարձեալ չենք փոխել մեր խաղաղասիրական ծրագիրը, նոյնը թող մնայ, միայն թէ մի քանի զէնքեր կը բաժանենք և խափալ կը պատուիրենք որ զէնք չի պարպեն, բայց ի պաշտպանողական լուրջ հանգամանքներէ:

Օհանջանեան — Հրէպի դաւան կողմը նայելով՝ Գալիս են:

Արփիար — Լա՛ւ, դու շատ մի խօսիր, մտիկ ըրէ միայն:

(Ներս կը մտնեն և սեղանին կը մօտենան Տիգրան Բէլէկեան, Վահան Մօզեան, Տամատեան, Տիգրան Արփիար և ուրիշ մը, սովորական բարեկներէ յետոյ Արփիար կսկսի):

Արփիար — Այսօր ձեզ հրաւիրելուս պատճառը մի ծանրակշիւ լուր հաղորդել է:

Բէլէկեան — Ինչ լուր...:

Արփիար — Պ. Օհանջանեան կըսէ որ Նազարէկէն հեռագիր է ստացել ցոյցը զէնքով կատարելու համար:

Տամատեան — Մենք կարող ենք մերժել, ինչպէս որ արդէն որոշել ենք, խաղաղասիրական լինելու է, քաղաքական հանգամանքները յեղափոխական լուրջ ցոյց մը կազմակերպելու աննպատակ են:

Բէլէկեան — Այո՛, այո՛, պ. Տամատեանին համաձայն եմ, անցեալ օր Մօստիշեան էֆէնտին Անգլիոյ Դեսպանին հետ տեսնուելով այն կարծիքը կը յայտնէր թէ հայերը առ այժմ պէտք է հանգարտ մնան:

Արփիար — Ես չեմ ըսիր որ ցոյցին յեղափոխական գոյն տանք, այլ պէտք է որ տղաքները վրանին զէնքեր ունենան, ո՞վ գիտէ ինչ կը պատահի, թիւեւ զէնքով յարձակման ենթարկուին, այն ատեն պաշտպանուելու համար զէնք անհրաժեշտ է:

Օհանջանեան — Շատ ճիշդ է, բարբարոս թուրքերից յուսալի է, նրանք չեն կարող զանազանիլ խա-

ղաղասիրականը յեղափոխական ցոյցից:

Տամատեան — Որչափ ալ բարբարոս լինին, անգէն ժողովուրդ մը կոտորելու չեն համարձակիր, և եթէ համարձակին իսկոյն ատեն թափուած անմեղ արիւնը Ներսիոյ առջեւ մեծ նշանակութիւն մը կունենայ, բայց եթէ մեր կողմէն ալ զէնքի գիմուի, այն ատեն ցոյցը իր նշանակութիւնը և կարեւորութիւնը կը կորսնցնէ:

Ուրիշ մը — Մանաւանդ մեր տաքարին մարդկանց վրայ չենք կարող վստահիլ, որչափ ալ խափալ պատուիրենք որ յարձակողական չ'սկսին, սակայն ծանր խօսք մը, թեթեւ հասարակութեան մը չեն կարող տանիլ և խափայն զէնքի կը գիմեն:

(Այս միջոցին եօթը խմբապետներէ բաղկացած գործադիր մարմինն ալ կուգայ կը միանայ առանց սովորական բարեկներէ յետոյ նստակներէն մին կը խօսի):

Նորիկ մը — Կը յուսամ թէ Կօմիտէն իր վերջնական որոշումը տուած է:

Արփիար — Այո՛, վճիռը կայացած է, միայն կը մնայ զէնքի որոշումը, այժմ քանի որ ժողովս ամբողջացած է, կարող ենք արդ մասին ալ վերջնական որոշում մը տալ:

Ձայներ — Շատ լաւ, շատ լաւ:

Տամատեան — Սակայն պէտք է ամենուն բացատրել որոշումի կարիւրութիւնը: Ընկերներ, նկատելով որ քաղաքական հանգամանքները աննպատակ են լուրջ յեղափոխական ցոյց մը բռնելու, նկատելով որ զուր տեղը պէտք է արիւն թափուի, և նկատելով որ եթէ անգէն լինի ցոյցը իր կարեւորութիւնը կունենայ, և եթէ այս պարագային արիւն եւ թափուի, եւրոպայ այդ անմեղ արեւան նշանակութիւն և կարեւորութիւն կուտայ, և նկատելով նաեւ որ մերիները տաք գլուխ մարդիկ են, միայն պաշտպա-

Համերաշխութեան ամրապնդող կապով միացած այլ ևս փոխանակ կառուելու ու վիճելու, հիմա ուր որ երթան Համերաշխութիւն կը քարոզեն: Փափաքելի է որ մեր արդի գոհացուցիչ վիճակին մէջ քանակ մշտնջենապէս և Սօֆիա-բնակ հայերս արտասահմանի մեր եղբարց հանդէպ Համերաշխութեան մի նմոյշը դառնանք:

Սօֆիա 3/15 Ապրիլ 1899 Տ.

ՆԱՄԱԿ ՖԻԼԻՊԷՆ

Ներկայ պարագայիս փոխանակ Հայաստանի աղէտալի վիճակին վրայ խորհելու, փոխանակ 300,000 նահատակներու անմեղ արեան վրէժ-խնդիր լինելու, ու Հայաստանի մէջ վայրագ թուրք ու քրդեր խուժանի ձեռք գիշեր ու ցորեկ տանջուող մեր եղբարց օգնութեան ձեռք կարկառու-լու, և վերջապէս իրր հայ ազգի անհատներ, հայրենիքի զինուորներ մեր վրի վրայ ծանրացած պարտա-կանութիւնը գործնականապէս կա-տարելու, այսօր կեկենք արտասահ-մանի ազատ երկրի մը մէջ վարդա-պետական խնդիրներ կը յարուցա-նենք, և պոռոտախօսութեամբ ու չարադատութեամբ ինքզինքնին ազ-գասէրներ, ազատութեան զինուոր-ներ, (միայն ազատ երկիրներու մէջ) յեղափոխականներ կը ներկայացնենք, և կսկսինք կուսակցական յայտնի ե-ս ա մ ո լ ու թ ե ա մ ք մը եղբայր եղբոր դէմ գրգռել...:

Տաճկաստանի մէջ յեղափոխա-կան թերթերու երես չի տեսնող պա-րոնները, այսօր Ֆիլիպէի մէջ կա-տարեալ յեղափոխականներ դար-

ձած... որոնք ամէն մէկ վայր-կենի պատրաստ են իրենց կու-սակցութեան չի պատկանող անհատ-ներու՝ անօթիներու խուժը՝ անսու-նել և այլն:

Կան ազնիւ երիտասարդներ ալ որոնք թէև ապագային մեծ յոյսեր կը խոստանան բայց ցաւալի է ըսել թէ՛ կուսակցամտութեամբ իրենց պ. Ղեկավարին ձեռքը գործիք են դար-ձած...:

Գաղով Ֆիլիպէի մեր Մեծ. ջոյն-րուն, ասոնց ալ բնաւ հոգը չէ թէ Հայաստանի մէջ սով կայ, անօթու-թիւն կայ, բաւ է որ իրենք կուտեն կը խմեն և ուրախութեամբ կանցնեն իրենց օրերը օկեթ, արք և ուրախ լերնի սկզբունքը լաւ ըմբռնած են: Բնաւ չեն ուզեր խորհիլ իրենց պար-տականութեան վրայ: Իսկական յե-ղափոխականը հոգին թեւին աակ ա-ռած՝ կը կուռի, կը բանտարկուի, կը սպաննուի ու կախաղան կը բարձրա-նայ Հայրենիքի ազատութեան հա-մար: Իրենք ալ առտուրեն մինչև ե-րկուսն չէն-պէջ նստել ու օղիի և գի-նիի շաւղ ծախսեր ընելով (հանգա-նակութեամբ) միայն կը զբաղին, փո-խանակ ի նպատակ մեր սովատանջ եղ-բայրներու օգնութեան ձեռք կար-կառելու: Փա՛քք ու պատիւ այսպի-սի ջոյնրուն, որոնք այնպիսի անձնա-ւորութիւններ են, որ ամբողջ Հայ ազգ մը ոտքի տակ կ'առնեն, հազա-րաւոր որբերու ու կորստեալներու լացն ու կոծն, օգնութեան աղաղակ-ներն չի լսել կը ձևացնեն առանց խղճի խայթի մը, և գլխի բաց կը վազեն վարդապետ մը պաշտպանե-լու համար: Թ...ն իր քսակը լոյն կը բանայ և վարդապետին այստեղ

քարոզիչ կարգուելու եռանդոտ ջան-քեր կ'ընէ, Ա...ն ալ օղիի պիւն լի կ-ն եր ո վ կը խրախուսէ վարդապետ գ ա ֆ ա լ ը ն եր ն որ պաշտպանեն զայն: Այս խեղճ ու կրակ մարդերը Մարտ 13ի ամբողջ գիշերը Եկեղեցիի բակին մէջ կ'սպասեն որ առաւօտեան վարդապետը դ օ ր պ ա յ ու թ ե ա մ ք Եկեղեցի մտնեն, և քարոզ ալ խօսել տան, ինչ որ հետեւեալ օրը կ'երակէ տեղի ունեցաւ: Հակառակորդները երկուստեք պատրաստութիւններ տե-սեր են նոյն օրը իրարու փառաւոր դաս մը տալու համար:

Առաւօտեան ժամ 6½ (ը. ե.) վարդապետին Եկեղեցի մտնելու ա-տեն կանխաւ մտածուած կատաղի կուռը կը պայթի հակառակորդներու և համակիրներու միջև. 20-30 հոգի կսկսին իրարու աչք զուլիս կոտրել բերելով, բարերով, երկաթի կտոր-ներով, և ընկողմէ պարպել իրարու վրայ են, մինչև որ քաղաքային ոս-տիկանութիւնը վրայ հասնելով կուռը կը դադարեցնէ և այդ կուռարարները բանտ կը փոխադրէ. երկու կողմէ ալ վիրաւորներ կան, այժմ վարդապետի հակառակորդ կողմէն երկու երիտա-սարդներ բանտարկուած են, իսկ միւսները նոյն օրը երաշխաւորու-թեամբ արձակուեցան, առաջին եր-կու երիտասարդներն՝ այսօր վաղը պիտի ազատուին. այժմ խնդիրը դա-տարանին ձգուած է, երկու կողմէ ալ փաստաբաններ կարգուած են դատը շարունակելու համար:

Անշուշտ ընթերցողը պիտի զգայ թէ այսպիսի խնդիր մը ո՛րքան գէշ տպաւորութիւն կը թողու օտարազ-գիներու վրայ:

Դո՛ւք, վարդապետ գաֆալը ջո-ջեր, փոխանակ վարդապետի մը հա-մար արիւնջայեղութեանց պատճառ լինելու, փոխանակ օղիներով ոգե-ւորելու ձեր արքանեակները, և ա-նոնց վիրաւորելուն պատճառ լինե-լու, և փոխանակ այժմ դատարանա-կան ծախքերու համար քսակնիդ լայն լայն բանալու խօսքերնիդ բաղեցնելու համար, կարող էիք այդ դրամներով Հայաստանի մէջ անօթութիւնէ ան-սուաղ մեռնող թշուառ ժողովրդի մը անմխիթար որբիկներուն աչաց ար-տասուքները սրբել:

Եւ դո՛ւք, պ. հակառակորդներ փոխանակ մտքերնիդ վարդապետա-կան փուռ խնդիրներով յոգնեցնելու և կտրիճ երիտասարդներ կուռի դաշ-տը խրկելու, և հեռուէն հանդիսա-տես լինելու, կարող էիք բնաւ չ'ար-գելիլ այդ կորստաւորին Եկեղեցի մըտ-նելը, պատասխանատուութիւնը ձգե-լով Պատրիարքին, վարդապետին և ջոյաղաներուն վրայ:

Այո՛, դուք որ հանրութեան օգ-տին ծառայող մշակներ կը հանդիսա-նաք Հայ Հասարակութեան առջև, երբէք ներքի չ'եր Զեզ ո՛չ միայն վարդապետի մը համար երիտասարդ-ներ վիրաւորուելուն պատճառ դառնալ այլ նոյն իսկ Պատրիարքի մը համար հաւու մը արիւն իսկ վազեցնել չէր արժեր:

Արսէն վարդապետ մը Եկեղեցի մտնելով Եկեղեցին չէր պղծուի, և թէ նոյն իսկ պղծուի ալ պատասխանա-տուութիւնը թող ծանրանայ կորստա-կան իշխանութեան վրայ: Եթէ քա-ջութիւն ունէիք թող մարտնչէիք մ'ի դարաւոր թշնամիին դէմ, որ մեր

նութեան համար սրբաւած գէնքը կա-րող են փոքր պատճառով մը յարձա-կողական նպատակի գործածել, ես համամիտ չեմ որ գէնք բաժնուի:

Մի քանի ֆայեր — Մեհն ալ:

Արփիար — Մեր խաղաղասիրա-կան ծրագիրը նոյնը պիտի մնայ, գէն-քի բաժանումը կառավարկուի մի մի-այն անձնական պաշտպանութեան համար, անկարելի է որ մեծ կամ փոքր խռովութիւն մը չի ծագի, յի-շեցէ՛ք Պատրիարքարանի ցոյցը, ոս-տիկանները, զինուորները կարող են ժողովուրդն արգիլել, և այդ տեղէն անպատճառ խռովութիւն մը կը ծա-գի, և գուցէ մերկանալը վնասուի և ծրագիրը ամբողջովին չի կրնան գոր-ծադրել, թերեւս ալ էշ-նահատակ ըլ-լան: Պատահելիք դժբաղդութեան ո՞վ պատասխանատու կը լինի, խղճիւրն-դիր է, լա՛ւ մտածեցէ՛ք, իզուր տեղը կ'ոտորել չտանք:

Տամատեան — Ձէնք ունենան աւելի շուտ կը կ'ոտորուին, մենք մե-րկներն չա՛տ լաւ կը ճանչնանք, ա-նոնց կանգուպն քայլերը ո՛չ որ կա-րող է կասեցնել:

Խմբապետներէն մին — Ուրեմն բուէի՛ գէնքը:

Բոլոր ներկայք — Բուէ՛ քուէ՛:

Տամատեան — Ուրեմն, ո՞վ որ գէնք բաժանել կուզէ թո՛ղ վեր բար-ձրացնէ ձեռքը:

(Արփիար, Օհանջանեան, երկու խմբապետ ձեռքերնին կը բարձրացնեն Տամատեան կը համրէ մէկ, երկու, երեք, չորս):

Տամատեան — Ո՞վ որ գէնքի բա-ժանումը չուզեր ձեռք բարձրացնէ:

(Բաց ի այդ չորսէն և Բէլէկ-եանէ, միւսները ձեռքերնին կը բար-ձրացնեն, Տամատեան կսկսի համրել):

Տամատեան — Ուրեմն, որոշուե-ցաւ առանց գէնքի խաղաղասիրական ցոյց մը, Տիկին Լուսինեան ուղերձը պիտի կարդայ և քանի մը հազար հայեր Մեծ Եկեղեցոսին բողոքադի-ր մը պիտի ներկայացնեն:

Օհանջանեան — Խմբապետները պարտաւորուած են իրանց մարդկանց հաղորդել այս որոշումը, որպէս զի որոշեալ օր պատրաստ գտնուին. նոյնպէս պէտք է հասարակ անձերի էլ իմաց տան, որչափ կարելի է, մեծ բազմութիւն հաւաքել այդ օր:

(Ժողովականները խումբ խումբ կը ցրուին. Արփիար, Օհանջանեան և Բէլէկեան կը մնան):

Արփիար — (խօսքը Բէլէկեանի ուղղելով) Կուզէի քեզ առանձին տեսնել: Ձէնքի խնդիրը իմ խելքի ծնունդը չէ:

Բէլէկեան — Հապա՛ ինչո՛ւ կը պնդէիր:

Արփիար — Հիմա՛ կըսեմ. (կաս-կածոտ չորս կողմը կը դիտէ, կամաց ձայնով) փաշան խնդրեց:

Բէլէկեան — (այլալաւ և բարձր ձայնով) փաշան...:

Արփիար — Կամաց, ուշադրու-թիւն ըրէ, լրտեսներ կը լինին, այո՛, փաշան կուզէ:

Բէլէկեան — Նպատակը ի՞նչ է:

Արփիար — Ձեմ գիտեր, ան-տանելի պահանջներ ունի:

Բէլէկեան — Միտքը ծռաւ է, չէ՞ կարելի մերժել. կըսենք որ ժո-ղովը չ'ընդունենք:

Արփիար — Դու լաւ գիտես որ այդ անկարելի է, ուղղակի մեղմէ կը պահանջէ կոր:

Բէլէկեան — Ձի՛ս ալ յիշեց:

Արփիար — Այո՛, քեզ ալ, Օ-հանջանեանն ալ. եթէ չ'ընդունին ես կը կանչեմ կը խօսեմ ըստ: Հիմա կը տեսնես որ մերժելը անկարելի է:

Բէլէկեան — Ձրան ծուղակն ենք ինչի: Բայց միտքը ի՞նչ է:

Արփիար — Սատանան գիտէ:

Օհանջանեան — Միտքս չարա-չար զբաղեցնում եմ, զօր եմ տալիս, բայց էլի չեմ կարողանում մի բան ի-մանալ:

Բէլէկեան — Բանի որ խնդիրը այդպէս է, մերկանալուն բան մը չ-

սելու չէ, մեր գիտցածներուն մի քանի ուղղութիւն կուտանք և կը պատ-ուիրենք որ բնաւ չի պարպեն:

Արփիար — Ուրի՛շ ճար չկայ: Բայց կը խնդրեմ որ ոչ որ չ'իմանայ. այդ անպիտանին ձեռքը գերի եղանք, խիզմ միշտ զիս կը տանջէ:

Բէլէկեան — Ի՛մա ալ:

Օհանջանեան — Զիս մի՛ մոռ-նաք:

(Վարագոյրը կիջնէ)

ԶՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

(Տեսարանը կը ներկայացնէ Սիր-բէճի երկաթուղիի կայարանը, Ար-խար և Թափառիկ լճար կը պա-տահին):

Թափառիկ — Բարե՛ Արփիար էֆէնտի:

Արփիար — Աստուծու բարին, ո՛ւր պիտի երթաք:

Թափառիկ — Գու՛մ-Գափու:

Արփիար — Ես՛ ալ:

Թափառիկ — Լաւ միտսին մէկ վակօն կի նստինք:

Արփիար — Թրէնին մեկնելուն ո՛րչափ ժամանակ կայ:

Թափառիկ — (ժամացոյցը նա-յելով) Դեռ քառորդ ժամ ունինք ե-կէք մէկ մէկ գարեջուր խմենք:

(Կայարանին գարեջրատունը կը մտնեն սեղանի մը շուրջ կը նստին: Թափառիկ երկու գաւաթ գարեջուր կը պատուի, որ ծառայ մը կը մա-տակարարէ: Թափառիկ ակնոցները թաշկինակով մաքրելով սկիսաւ մը կը վառէ:)

Թափառիկ — Որքան փոշի՛...:

Արփիար — Գաւառներն ի՞նչ-պէս են:

Թափառիկ — Շատ գիւղերու փոշին անտանելի է, մանաւանդ կա-լերու ժամանակ:

Արփիար — Բաղաքներն ի՞նչ-պէս են:

Թափառիկ — Պոլսոյ համեմատ

քիչ է, մանաւանդ Ակնը բնաւ փոշի չկայ, հետեւաբար ցեխ:

Արփիար — Ապրելիք տեղն այդ է ամառ փոշի ձմեռ ցեխ չկայ:

Թափառիկ — Ո՛չ միայն փոշի և ցեխ չի գտնուելուն համար, այլ ապ-րելու մեծ գիւրտութիւն ունենալուն համար. գաւառներու մէջ կարծէ Ակն, Եւզղիւա և Վան բնակիլ:

Արփիար — Դեսպանին տեսու-թեան կերթա՛ք երբեմն:

Թափառիկ — Յաճախ:

Արփիար — Մեր խնդրի վրայ կը խօսի:

Թափառիկ — Երբեմն:

Արփիար — Ի՞նչ գաղափար կը յայտնէ:

Թափառիկ — Անպիտոյ անկարո-ղութիւնն և Ռուսիոյ հակառակու-թիւնը:

Արփիար — Անգլիա եթէ ուզէ, կարող է:

Թափառիկ — Այո՛, եթէ ուզէ, սակայն կերեկ թէ Ռուսիոյ խուլ հա-կառակութեան գէմ ոչինչ չի պիտի ընէ, չի պիտի ուզէ իւր շահերը վը-տանգել, դեսպանին ըսածներէն ես աս հասկցայ:

Արփիար — Լսեցի՛ք, Հնչակեան-ները ցոյց մը պիտի ընեն:

Թափառիկ — Ցո՛յց մը... (զար-մանօք):

Արփիար — Այո՛, թո՛ղ Դաշնակ-ցականներն իմանան որ Հնչակեան-ները մեռած չեն...:

Թափառիկ — Ի՞նչ տեսակ ցոյց է, ի՞նչ պիտի ընէք:

Արփիար — Խուռն բազմու-թեամբ Մեծ Եկեղեցոսին բողոքադի-ր պիտի ներկայացուի Մայիս 11ի ծրագրին բարենորոգմանց գործադը-րութիւնը պահանջելով:

(Շարունակելի)

մայր երկրի հարեւաւոր սրբատեղիները պղծեցին:

Այս խառնութիւններու ու արիւնալիցութիւններու մեծ պատասխանատուութիւնը կը ծանրանայ Օրմանեան Պատրիարքի վրայ, որ հայ ժողովուրդը միշտ երկպառակութեանց մէջ տեսնել փափաքելով 3 ամիսէ հետէ ո՛ր և է գործադրութիւնը ըրած չէ Արքէն վարդապետի նկատմամբ: Պատրիարքն ու կրօն. ժողովը անշուշտ այս կաւոյն վրայ անմիջական կարգադրութեամբ մը պիտի հեռացնեն այս կրօնականը, որպէս զի խաղաղութիւնը կատարելապէս տիրէ Ֆիլիպէի հայոցս մէջ: Կարգադրութիւնը դեռ չափ գործեր կան, թաղական ընտրութիւն, դպրոցի բարեկարգութիւն, բռնակալի հաշիւ են, որոնք այնպէս կերեւայ թէ առանց կռիւններու չ'պիտի կարգադրուին:

Փափաքելին էր որ, այս կռիւը վերջինը լինէր և ասկէ վերջ կարգադրութիւնը գործէր համեմատութեամբ իրար խօսք հասկնալով կարգադրութիւն, հակառակ պարագային եթէ այսօրինակ դէպքեր կրկնուին, հետեւեալը աւելի տխուր և ծանրակշիռ ըլլալը այժմէն կրնայ իւրաքանչիւր որ գուշակել:

Համեմատութեան համակրող

Կայծ

Մարտ 17 Ֆիլիպէ 1899

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԵ

— Հաւաստի աղբիւրէ կը տեղեկանանք թէ կարեւոր գործիչներէն ոմն արտասահմանէն Օրմանեան Պատրիարքին սպառնական խիստ նամակ մը գրելով խորհուրդ տուեր է չուտով հրաժարիլ Պատրիարքական գահէն, հակառակ պարագային կեանքը վրտանգի տակ ըլլալը ծանուցեր է: Այժմէն չենք կարող կանխագուշակել թէ, եթէ երբէք նորին սրբազնութիւնը կարեւորութիւն չընծայէ այս նամակին, պ. նամակագիրը ինք անձամբ պիտի գործադրէ մահուան պատիժը թէ իւր արքանեակներու միջոցաւ գործադրել պիտի տայ:

— Կարգ մը տաք գլուխ երիտասարդներ ընդարձակ նամակ մը գրած են մեզ, խնդրելով որ ի ըստ հայ աշխարհի հրապարակներ իրենց հետեւեալ նպատակը:

1. «Մահ Դաւաճանաց» անուն գաղտնի ընկերութիւն մը հաստատել և արտասահմանի հայաբնակ ամէն երկիրներու մէջ համախոհներ որոսել:

2. Կազմակերպութեան անմիջապէս յետոյ զանազան քաղաքներէ չըլաբերականներ, հրատարակել և մատնանիշ ընել ժողովրդին ազգ. կենսական շահերը վտանգող փճացած տարրը:

3. Ընկերութիւնը՝ իւր անդամակիցներու գիտութեամբ պաշտօնական նամակով պիտի դիմէ վնասակար անձերու և անոնց հեռացումը պիտի պահանջէ հրապարակէն. այն որ չանտար, առաջարկը պիտի կրկնէ, իսկ եթէ իւր երրորդ զեկուցումն ալ անխելի մնայ, իսկոյն մահուան դատապարտելով վճիռ կարճ ժամանակամիջոցի մէջ գործադրել պիտի տայ:

Թէ և խիստ երկար գրուած է նամակը, որուն մէջ պ. պ. հեղինակները թի քանի անտեղի ակնարկութիւններ

ալ ըրած են խմբագրութեանս դէմ, իբր թէ անկողնակալութեան ուղիէն չեղած կը տեսնեն մեզ, սակայն առայժմ թէ՛ տեղի սղութեան և թէ՛ ուրիշ ինչ ինչ նկատումներով նամակի ամբողջութիւնը չենք կարող հրատարակել ապագային ծանրակշիռ պատասխանատուութեան զերծ մնալու համար: Մենք կը բաւականանանք այդ գրութեան երեք յոգուածները միայն հրատարակել որ ամենակարեւոր կէտերն են, և կը թողունք մեր առաջիկայ համարներով պատասխանել այդ պարոններուն: Չի մոռնանք նաև յիշեցնել յարգելի պարոններուն որ հաճին երեսն հասցէն և իսկական անունին խմբագրութեանս հաղորդել:

— Ռուսներու մեր բարեկամներէն ոմանք կը տեղեկացնեն մեզ թէ՛ կարեւոր հայ մը, ի յիշատակ նուպար Փաշայի՝ Եգիպտոսի կամ Աթէնքի մէջ մի. որբանոցի բացումը խնդրած է Բարձր. Պողոս Փաշայէն, և առիթը իրեն նամակ մ'ալ գրած է, որուն պատճէնը արդէն ձեռքերն իս հասած ըլլալով մեր առաջիկայ թիւով կը հրատարակենք:

— Հայ բարերարի մը մասին տեսութիւն մը ընել մեր անցեալ թիւով խոստացած էինք թէ և, բայց տեղի սղութեան համար յաջորդ թիւին թողուցինք:

— Կրեմէն կը գրեն թէ՛ Արժ. Տէր Մանուէլ հայր՝ իւր պաշտօնատեղին (Գանտիա) ժամանելէն մինչև օրս եկեղեցւոյ նորոգութեան համար ըրած բոլոր ջանքերը գրեթէ ապարդիւն մընացած են: Անգլիացի բարձրատիճան պաշտօնէից թէ և կրկնակի դիմումներ ըրեր է, բայց սա բացասական պատասխանը ստացեր է թէ՛ Անգլիացիք Կրեմէնի մէջ լոկ զինուորական իշխանութիւն ունին ո՛չ թէ քաղաքական. ուստի կղզուոյ կառավարիչ Եօրկիոս իշխանը երբ Գանտիան այցելէ, անոր աղբիւրագիր մը տուէք ձեր Եկեղեցւոյ պահանջներուն գոհացում տալու համար: Իշխանը մինչև ցարդ եկած չէ և հրապարակային խօսակցութեանց նայելով գալիք ալ չունի:

Կը փնտռուի Սիւրաստիոյ Ղանթարօզ գիւղէն Օվակ Պալլէեան 25 տարեկան, գեղնաղոյն երիտասարդ՝ որ Պանթայի ցոյցին Պօլէն Ամերիկա մեկնած է. գինքը ճանչցողներէն կամ ուր ըլլալը գիտողներէն կը խնդրուի որ հաճին իմաց տալ «Միութիւն» խմբագրութեան:

«SOURÈN AFTANDELIAN TAVRIS-PERSE»

Vend Timbres-Poste Persans, en gros et en détail.

Demander prix-courant contre 15 cent sans oblitérés.

ԲԱԶՄԱԿԵՊ

ԲԱԶՄԱԿԵՊ՝ կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը: Կը պարունակէ ուսումնական հին նորակազմ բառերու ստուգաբանութիւն, հետաքրքրական ազգային տեղեկութիւնք. նըմանապէս պատմական, ուսումնական, կենսագրական, բարոյական և իմաստասիրական և այլն յոգուածներ:

Հասցէն՝

RÉDACTION DE LA REVUE «PAZ MAVEP».

S.t Lazar VENISE (Italie)

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԻՆԱՆՇԱՆ

Գունաւոր և մեծագիր. գինն է 2 ֆր. փոստի ծախքով: Իմել իւր խմբագրութեանս կամ արտասահմանի մեր պ. պ. գործակատարներուն: Ձինանշան ունենալ փափաքողները և «Միութիւն»ը հատր 10 սանթիմի ձեռքէ առնել ուղղորդել թող դիմեն՝ Ռուսմանիայէն և Սերպիայէն հետեւեալ հասցէին՝ Manouk Krikorian Kazarma Pompierilor (Constanta) (Roumanie)

Ռուսներ՝ Karnig Denkmedjian Roustchouk (Bulgarie)
Վառնա՝ M. Zarbhanelian Varna (Bulgarie)

Իսկ Ամերիկայեան ազգայինք դիմեն Mr. Dedis Zakar am Serew Co. Providence. R. Y U. S. A.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Պ. Ա. ՉԱՐԿԱՆԷԼԵԱՆԻ

(Հաստատուալ ի Վառնա Պուլկարիա)

Կը գտնուին ամէն տեսակ գիրք-ցական և վիպական գիրքեր. «Միութիւն» խմբագրութեան հրատարակած Հայկական Ձինանշան որուն գինն է 2 ֆր. փոստի ծախքով: Նմանապէս Հայկական ընդարձակ երգարան գին 2 ֆր. փոստի ծախքով: Դրամի փոխարէն կրնուին չի գործածուած նամակադրօշմներ (փուլ) Պուլկարական, Գաղղիական, Անգլիական և Թրքական: Միտու կառնուին և թէ կը վաճառուին ամէն տեսակ նամակադրօշմներ: Դիմել առ Mr. A. Zarbhanelian, Librairie Varna (Bulgarie)

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ» ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը:

Հայ - Գրական յոգուածներէն զատ՝ ճշդիւ տեղեկութիւն կը տրուի հայ - գրականութեան, պատմութեան և այլն նկատմամբ ամէն ամիս ելած հրատարակութեանց վրայ: Նոյնպէս բնադատական տեղեկութիւն կը տրուի ազգային լրագրաց մէջ տրուած կարեւոր լրերու մէջ: Հասցէն՝ A la Rédaction de la Revue «Hantesse», Vienne (Autriche) Valz Me chitharistengasse 4.

Ա. Ն. Ա. Հ. Ի. Տ.

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՒՄ

Ազգային, Գրական, և Դեղարուհական: Հասցէն՝

Mr. A. Tchobanian 6 place de l'Odéon. PARIS

Ս. ՍԱՊԱԶ ԳԻՒԼԵԱՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ԹԵՏՏՈՅ

96 երես: բաղկացեալ կարգալուարժանի բնաթիւ գործ մ'է գինն է 1 ֆր. — Շուտով ի լոյս պիտի բնծայէ նաև ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ «ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ԹԵՏՏՈՅ» զբոյցը գիմել հեղինակի հասցէին ի Ռուսներ, և «Շարժում» խմբագրութեան ի Վառնա:

ԲԱՆԱՍԵՐ

ՀԱՆԴԵՍ ՀԱՆՈՍՈՒԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ և ՔՆՆԱԿԱՆ, որ պիտի հրատարակուի մօտեքս ի Պարիս

ՏԵՐՈՐԵՆՔԵԱՄԲԿ. Բ. ԲԱՍՄԱՋԵԱՆԻ

Եւ աշխատակցութեամբ ազգային և օտար արեւելագիտաց:

Բացուած է բաժանորդագրութիւնը՝ Տարեկան շուրս գրել համար 20 ֆր. ամէն տեղ. իսկ իւրաքանչիւր գիրքն՝ առ նուազն 100 էջէ բաղկացեալ կ'արժէ ֆրանք 6:

Դիմել իւր հետեւեալ հասցէին՝ Basmadjian — 112, Bd Rochechoart. PARIS

ՀԱՅԵԼԻ

Ազգային և Զաւիտական

Շարաթականագէտ

Տարեկան բաժնեգինն է 12 ֆր. վեցամեայ 6 ֆր. կանխիկ. Հասցէն՝ Diran Papazian Rue Dragoman, K Stepan Varna (Bulgarie)

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՆԴԻՐԻՔ ԳԱՂ.

ԵՒ ՀՍԵ

ԳՐՈՐԾԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Ի. Հ. ՍԻՄԵՆՆԷ ԵՐԵՄԵԱՆ

Աշխարհիկ լեզուով՝ ընդարձակ բացատրութիւններ կուտայ ընդհանուր գիտական և բժշկական իրաց և այլ կարեւոր նիւթք վրայ էջերով օգտակար տեղեկութիւնք անպակաս են: Մոտե գործադրութեանս խմբագրութիւնը, որ է 10 ֆրանք, կը տեւէ մինչև մարտ ամսոյն սկիզբն. յետոյ գինը 15 ֆրանքի կը բարձրանայ: Մինչև ցարդ բաժանորդագրութիւնը հասած են 150ի: Հասցէն՝

Direction de l'Imprimerie arménienne St LAZAR VENISE

Պ. Գ. Տէօքմէճեան հրատարակած է հետեւեալ մեծագիր (24—27) լուսանկար պատկերներն որոնք ընտրեք բարդօնի (33—39) վրայ փակցուած կը ծախուին հատր ֆր. 2,50ի՝ ամեն տեղի համար և փոստի ծախքով միասին:

Ազգային հաստատութիւններու և մեծաքանակ գնողներու համար գոհացուցիչ զեղջ:

Վճարմունք կանխիկ:

1. Նշանակը Հայաստանեայց
2. Խրիմեան Հայրիկ
3. Իզմիրեան Պատրիարք
4. Ներսէս Պատրիարք
5. Բաֆֆի
6. Քամառ Քաթիպայ
7. Գ. Արծրունի

Դիմել՝ K. Deukmedjian Roustchouk (Bulgarie)

«Միութիւն»ը ստացող մեր պատ. ազգայիններէն կը խնդրենք որ հաճին իրենց բաժնեգինները զրկել, և կամ թերթը վերադարձնել որ հասկընանք իրենց բաժանորդութեան զադրած ըլլալը:

ԽՈՐԱԿ. «ՄԻՈՒԹԻՒՆ»

ԱՌԷՆՔ ՀԱՅԿ. ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ